ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Ուզունյան

«31» օգոստոսի 2023թ.

# Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

6ա դասարան

Դասղեկ ՝ Ս. Դանիելյան

«2023- 2024» ուսումնական տարի

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

6ա դասարանում սովորում է 17 աղջիկ, 15 տղա: Աշակերտները ցուցաբերում են իրենց ընդունակություններին և հմտությունների համապատասխան առաջադիմություն: Դասարանի աշակերտները համախմբված են, համերաշխ: Ձևավորվել է սովորողների միասնական կոլեկտիվ:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կազմակերպել սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը: Հետևել աշակերտների հաճախումներին: Նպաստել սովորողների առաջադիմության բարձրացմանը, կատարել դասալսումներ, զրույցներ: Ուսուցիչների եւ սովորողների միջեւ առկա է ներդաշնակ ու գործակցային մթնոլորտ: Յուրաքանչյուր աշակերտ անհատ է, զարգացնել իրենց կարծիքը ունենալու, արտահայտելու, պաշտպանելու եւ դիմացինի կարծիքը հարգելու ընդունակությունը: Հաստատել հեղինակություն, հետեւել կարգուկանոնին: Կազմակերպել հետաքրքիր քննարկումներ, մրցույթներ, զրույցներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ, դասղեկի ժամեր: Նշում ենք աշակերտների ծննդյան օրերը, որպեսզի ավելի ջերմ, հոգատար լինեն: Այցելել թանգարաններ, թատրոններ:

### Հոգևոր դաստիարակություն

Դասղեկի ժամերին անցկացնել զրույց քննարկումներ Աստվածաշնչյան քրիստոնեական թեմաներով:

Այցելել եկեղեցիներ:

### Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Այցելել պատկերասրահներ և մշակութային օջախներ: Կազմակերպել էքսկուրսիաներ: Դասարանը կահավորել ճաշակով և նպատակային:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, , քաջություն, կամքի ուժ: Ծանոթացնել հայ ժողովրդի անցած ուղուն՝ նրա փառավոր էջերին և հերոսներին: Սեր արթնացնել հայրենիքի նկատմամբ:

Ֆիզիկական դաստիարակություն

Առաջնորդվել <<առողջ մարմնում առողջ հոգի>> նշանաբանով,
ձևավորել առողջ ապրելակերպկեցվածքի ձևավորման համար ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել աշակերտի ճիշտ նստելաձևը և կեցվածքը: Անընդհատ անցկացնել ընդհանուր զարգացման վարժություններ, ֆիզկուլտդադարներ:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն, ընդգրկել սանիտարահիգիենիկ աշխատանքներին: Հետևել դասասենյակի մաքրությանը: Սահմանել հերթապահություն:

Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտներին իրազեկել առկա էկոլոգիայի, բնապահպանության խնդիրները : Դրա պահպանության համար յուրաքանչյուրի մասնակցությունը կարևոր է:

Դպրոց-ընտանիք կապը

Ապահովել աշակերտ-ծնող –դպրոց կապը: Ծնողներին ներգրավել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին և աշխատանքներին:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
## ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Հ/Հ | Աշխատանքի նկարագիրը | Կատարման ժամկետը | Նշում կատարման մասին |
|---|---|---|---|
| 1 | Աշխատանքային պլանի կազմում: Դասասենյակը դասավորել այնպես,որ հարմար լինի երկհամակազմ դասարանի աշակերտների համար | Սեպտ. | |
| 2 | Աշակերտների ապահովվածությունը դասագրքերով | Սեպտ. | |
| 3 | Պահպանեք վարվեցողության կանոնները | Սեպտ. | |
| 4 | Հայաստանի զինանշանի,օրհներգի և դրոշի պատմությունը: | Սեպտ. | |
| 5 | Մարդ ,ում մասին կուզեի ամեն ինչ իմանալ: | Հոկտեմբեր | |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Որոնք են լավ և վատ նորությունները: | Հոկտեմբեր | |
| 7 | Հետևել դասարանի սանիտարահիգիենիկ վիճակին | Հոկտեմբեր | |
| 8 | Վատ սովորությունների հետևանքները | Հոկտեմբեր | |
| 9 | Բոլորս տարբեր ենք: | Նոյեմբեր | |
| 10 | Երեխաների իրավունքները: | Նոյեմբեր | |
| 11 | Չրույց առաջադիմության մասին | Նոյեմբեր | |
| 12 | Ում եմ ուզում նմանվել | Նոյեմբեր | |
| 13 | Պահպանեք վարվեցողության կանոնները | դեկտեմբեր | |
| 14 | Ճ/երթ անվտանգ երթևեկության կանոնների պահպանում | Դեկտեմբեր | |
| 15 | Նոր տարվա հանդեսի կազմակերպում | դեկտեմբեր | |
| 16 | Եկեղեցու դերը ազգապահպանման և հոգևոր հարստացման գործում,Սուրբ ծննդյան խորհուրդը | հունվար | |
| 17 | Իմ սիրած տոնը: | Հունվար | |
| 18 | Պահպանեք վարվեցողության կանոնները | հունվար | |
| 19 | Հայաստանի ազգային հերոսները; Մեր ժամանակի հերոսները, նրանց կատարած սխրանքները: ՀՀ հզոր բանակ | հունվար | |
| 20 | Առողջ ապրելակերպ : Ճշգրիտ օգտվենք օրվա ռեժիմից: | Փետրվար | |
| 21 | Օգնիր ընկերոջդ մեծահոգաբար: «Խնդիրների համար համապատասխան որոշումներ կայացնել» | Փետրվար | |
| 22 | «Վատ սովորություններ: Ինչ պե՞ս պայքարել դրանց դեմ», «Հայրիկների դերը երեխաների դաստիարակության գործում» | Փետրվար | |
| 23 | Ես քաղաքացին եմ ՀՀ-ն: Բարոյախրատական դասեր | Փետրվար | |
| 24 | Գարունը նման է մայրիկիս, միջոցառում մարտի 8-ի կապակցությամբ | Մարտ | |
| 25 | Իմ ծննդավայրը | Մարտ | |
| 26 | Արդյունավետ օգտվենք համակարգչից | Մարտ | |
| 27 | Որ մասնագիտությունն է ինձ դուր գալիս: | ապրիլ | |
| 28 | Ունեցիր թեկուզ փոքր խելք, բայց քոնը: | Ապրիլ | |
| 29 | Աշխատանքի դերն ու նշանակությունը: | Ապրիլ | |
| 30 | Ուժեղ լինել նշանակում է: | ապրիլ | |
| 31 | Մայրիկի օրը մեր ընտանիքում» | Մայիս | |
| 32 | Օգնություն ծնողներին | Մայիս | |
| 33 | Պահպանեք վարվեցողության կանոնները | Մայիս | |
| 34 | Ամառային արձակուրդների նախապատրաստում | Մայիս | |